ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Սույն հայտարարությունը հրապարակվում է «22» մարտի 2024թ.-ին:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է «**ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար՝ Բանկում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության (ԱՎՏՈԿԱՍԿՈ), ցանցային սարքավորումների և այլ հիմնական միջոցների ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության CBA-2024-005 ծածկագրով հրապարակային մրցույթի**» ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակիցների ընտրությունը հիմնավորող պատճառների, անգործության ժամկետի և շահերի բախման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Հրապարակային մրցույթին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները՝

1. **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**
2. **«ԷՖԵՍ» ԱՓԲԸ**
3. **«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ**
4. **«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտերով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «22» մարտի 2024թ. նիստի ընթացքում ամփոփվել է վերը նշված հրապարակային մրցույթի արդյունքները: Հաղթող մասնակից է ճանաչվել **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն:**

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 5 (հինգ) օրացուցային օր է:

Սույն ընթացակարգի շրջանակում շահերի բախում չի հայտնաբերվել:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Սիրան Եգանյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ